



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

„ 26 „ հունիսի 2013թ.

N 57

ՎԱԼԵՐԻ ՉԱՐՎԱԴԱՐՅԱՆԻ ՀԵՏ 2008Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 3-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԹԻՎ 163
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. 2013թվականի հունիսի 26-ից լուծել Վալերի Չարվադարյանի հետ 2008թվականի օգոստոսի 3-ին կնքված N 163 աշխատանքային պայմանագիրը՝ ազատելով նրան «Գավառի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ